ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28-ը օգոստոսի 2015թ.

ԱՂԲԱՏԱՐ ՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/

N 1-Ա ՈՐՈՇՈՒՄ

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ համայնքային սեփականություն հանդիսացող 2 մասնագիտացված աղբատար մեքենաները երկար տարիներ շահագործվելուց հնացել են, հաճախակի անսարք վիճակում գտնվելու արդյունքում աղբահանության բնագավառում ստեղծվում է անկառավարելի իրավիճակ, նշված աշխատանքները բարելավելու նպատակով, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համաձայնություն տալ՝ օրենքով սահմանված կարգով աղբատար մեքենա գնելու համար համայնքի բյուջեի միջոցներից մինչև 6 մլն ՀՀ դրամ գումար տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ	ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28-ը օգոստոսի 2015թ.

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ Ղ. ՓԱՐՊԵՑԻ, ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆՅԱՆ, Ղ. ԱԼԻՇԱՆԻ , Տ. ՉՈՒԽԱՋՅԱՆ, Մ. ԽՈՐԵՆԱՑԻ, ՄԻԿՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ, ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՐԱԿԻՑ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ/

N 2-Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/5, <Գնումների մասին> ՀՀ օրենքի 20/5.2 հոդվածների պահանջներով, հաշվի առնելով այն փաստը, որ Աշտարակ քաղաքի Ղ. Փարպեցի, Հենր. Թումանյան, Ղ. Ալիշանի, Տ. Չուխաջյան, Արագածի, Մ. Խորենացի, Միկոյան եղբայրների, Արարատյան և նրանց հարակից փողոցների շուրջ 550 տնտեսություն, տարիներ շարունակ չունենալով ոռոգման գործող համակարգ, տնամերձ հողատարածքները ոռոգվել են խմելու ջրով և խմելու ջրամատակարարման նոր համակարգի շահագործումից հետո այն դարձել է անհնար՝ հաշվիչների տեղադրման և ապօրինի միացումների բացառման պատճառով:

Ընդառաջելով նշված թաղամասերի բնակիչների բազմաթիվ գրավոր և բանավոր դիմում բողոքները՝ ոռոգման համակարգ անցկացնելու մասին, այն փաստը, որ ծագել է արտակարգ իրավիճակ և գնման անհետաձգելի պահանջ, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համաձայնություն տալ սկսելու Աշտարակ քաղաքի Ղ. Փարպեցի, Հենր. Թումանյան, Ղ. Ալիշանի, Տ. Չուխաջյան, Արագածի, Մ.Խորենացի, Միկոյան եղբայրների, Արարատյան և նրանց հարակից փողոցների տնամերձ հողատարածքների ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնման աշխատանքների իրականացման գնման գործընթաց՝ <Տրանսնախագիծ> ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից կազմված նախագծա-նախահաշվային փաստաթղթերով և 19 021 950 ՀՀ դրամ նախահաշվային արժեքով:
2. Բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ:

/Բյուջեի փոփոխված տարբերակը կցվում է/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ – 0* *ՉԵՌՆՊԱՀ - 0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ	ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՄԵՆ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28-ը օգոստոսի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/

Ն 3-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48[1], 76-80 հոդվածների, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Մաշտոցի փողոցի N75[Ա] հասցեում գտնվող բնակելի տան մուտքի կազմակերպման համար կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Աննա Բաբախանյանին բնակելի տանը կից 42քմ հողատարածքը տրամադրելու 30 տարի ժամկետով՝ տարեկան 30000 ՀՀ դրամ վճարով:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ – 0* *ՉԵՌՆՊԱՀ - 0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ	ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28-ը օգոստոսի 2015թ.

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/

Ն 4-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66 և <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/20 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համաձայնություն տալ գոյություն ունեցող հասարակական նշանակության օբյեկտի /խանութ/ ընդլայման համար 843-001 ծածկագրից 20քմ հողամասն ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարելու Նազիկ Թորոսյանին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ – 0* *ՉԵՌՆՊԱՀ - 0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ	ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28-ը օգոստոսի 2015թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29.01.2014Թ. <ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ> N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Գ. ԴԱՏՈՒՄՅԱՆ/

N 5-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 31/6, <Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 26/1.բ, Աշխատանքային օրենսգրքի 188 և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար ներքոհիշյալ համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանել հավելավճար.
   - *Տիգրան Չալաբյան- համայնքային ծառայության 3-րդ դասի խորհրդական - 20000 դրամ*
   - *Մակար Հովհաննիսյան - համայնքային ծառայության 1-ին դասի առաջատար ծառայող - 20000 դրամ*
   - *Անդրանիկ Եսայան - համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայող - 20000 դրամ*
   - *Աննա Տոնյան - աշխատանքային ծավալների ավելացման և ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված - 20000 դրամ*
2. Սույն որոշումն ուժի մեջ է 2015թ.-ի սեպտեմբերի 1-ից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ – 0* *ՉԵՌՆՊԱՀ - 0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ	ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՄԵՆ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28-ը օգոստոսի 2015թ.

<ՄԱՆՈՒՇԱԿ> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԱՆՕԳՏԱԳՈՐԾԵԼԻ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՇՏԱՐԱԿԻ <ԳՈՒԼԱՄԵՐՅԱՆ> ՀԱՅՈՐԴԱՑ ՏԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ/

N 6-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/20 հոդվածի պահանջներով, ընդառաջելով Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Աշտարակի <Գուլամերյան> հայորդաց տան տնօրեն Կ.Գևորգյանի խնդրանքին, այն է, Միսակյան փողոցում գտնվող Հայորդաց տան շենքի հիմնանորոգման պատճառով մոտ 300 երեխաների ուսումնական գործընթացը <Մանուշակ> մանկապարտեզի անօգտագործելի մակերեսներում կազմակերպելու մասին, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. <Մանուշակ> մանկապարտեզի անօգտագործելի մակերեսները մեկ տարի ժամկետով՝ անհատույց օգտագործման իրավունքով, աշխատանքները կազմակերպելու նպատակով ժամանակավորապես տրամադրել Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Աշտարակի <Գուլամերյան> հայորդաց տանը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 10 *ԴԵՄ – 0* *ՉԵՌՆՊԱՀ - 0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ	ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ	ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ	ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՄԵՆ	ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ	ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն